ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 213-Ա

## ԱՅԳԵՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՇԵՍ ՎԱՍԻԼՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Այգեհովիտի միջնակարգ դպրոցի կոլեկտիվի առաջարկությունը, Այգեհովիտ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 26-Ա որոշումը՝

որոշում եմ

1. Անվանակոչել Այգեհովիտի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունը 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատար, գնդապետ Արտաշես Վասիլյանի անունով:

2. Այգեհովիտի միջնակարգ դպրոցի տնօրենին՝

1/ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություն կատարել դպրոցի կանոնադրության մեջ և ներկայացնել հաստատման,

2/ սույն որոշումից բխող փոփոխությունները սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 21
ք.Իջևան